

Ոռուսախան կը սեպուի : Ի՞այց կան երկու իրեք մանր տէրութիւնք ալ, որոնք թէ պէտ առջիններուն չափ ընդարձակ ու բազմամարդ չեն, բայց վաճառականութեան մէջ մեծ յառաջադիմութիւն ունին . այսպէս են Հոլանտան, Փիեմոնթն ու Պիելշիան : Հոլանտայի վաճառականութիւնը շատ ընդարձակ է պատճառաւ իրեն գաղթականներուն՝ որ են Ի՞սիոյ մէջ Շավա, Առումազրա, Պորնէոյ, Չելէպ ու Ա՞ոլուքեան կը զիները . Վմերիկայի մէջ Առուրինամ, Քուրասայոյ . Վմիրիկէի մէջ Լուինէայի ծովեզելքը : Պիելշիան գաղթական չունի, բայց իր երկրին մէջ ալ ամփոփուած ըլլալով՝ իր վաճառականութիւնը ուէտ — Արվէկիայինէն ու Ապանիայինէն աւելի է ու զրեթէ Առուսին կը հասնի : Վսոնց կարգը կը նանք սեպել նաև Վմսուրկ քաղաքը, որ Խորոպայի ցամաքին առջի նաւահանգիստը կը նայ սեպուիլ, և իրեն ներս մտած ու ելած ապրանաց գումարը Առուսաստանինէն շատ աւելի է : Վսոնցմէ ետև կուգայ Տաճկաստանի վաճառականութիւնը . որուն վրայ թէպէտ որոշ տեղեկութիւն չունինք, բայց յայտնի է որ օր օրուան վրայ երթալով կը ծագակի ու կը զարդանայ, մանաւանդ ծովային վաճառականութիւնը . որովհետեւ որ ցամաքի կողմանէ դեռ շատ պակասութիւն կայ հաղորդակցութեան ու Տամբայներու դիւրութեան . ծովային վաճառականութեան ալ մեծագոյն մասը օտարաց ձեռքն է, նոյն իսկ երկրին բերոց վաճառականութիւնը : Ջանկալի բան է որ մեր ազգայինք որ ՚ի սկզբանէ հետէ վաճառականութեան մեծ յարմարաւթիւն ցցուցած են՝ եւրոպական օրինաք վաճառականութեան ու նաւարկութեան ձեռք զարնէին :

Ուրիշ յօդուածով մըն ալ պիտի խօսինք Խորոպայի գլխաւոր տօնավաճառներուն վրայ . անոր ետևէն Խորոպայի վաճառաշահ քաղաքներուն ցուցակն ալ կը դնէնք :

### ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԵՒՆ

ՍԿԶԲՈՒՆՔ ԲՆԱԿՈՒԴՈՒԹԵԱՆ

Դաս թ. Արքի սկզբանց համառոտրինք :

Խնառուան հիմա շատ մը նիւթոց վրայ հիմնական տեղեկութիւններ ու նեցանք ու ձանցանք թէ ինչ է թը թուածինը, ջրածինը, օդը, ջուրը, կիրը, կաւիճը, և այլն . և թէ ասոնց մէ շատը պարզ մարմին չեն, հապա անոնց բաղադրութիւն : Խնչպէս օդը թը թուածնէ ու մահածնէ բաղադրեալ է, ջուրը որ թթուածնէ ու ջրածնէ բաղադրեալ է, կիրը թթուածնէ ու զուտ կրէ, կաւիճը կրէ ու ածխային թթուէ, ածխային թթուն ալ ածուխնէ ու թթուածնէ, և այլն :

Խոկ թթուածնին, ջրածնին ու զուտ ածիրին համար ամենեկին ըրսինք թէ ինչ նիւթերէ բաղկացեալ են, ինչպէս որ հասարակ ջրին, ծովու ջրին, հանքային աղին, գաճին, կաւին ու շաղախներուն համար ըսինք : — Վցով ուրեմն իմացանք թէ մարմիններն երկու տեսակ են եղեր. մէյմը անոնք որոնք ուրիշ նիւթերով բաղադրած չեն, ուստի ուրիշ նիւթերու ալ չեն լուծուիր, և ասոնք կ'ըսուին պարզ մարմիններ . մէյմըն ալ անոնք, որոնք այլ այլ պարզ մարմիններէ միացեալ ու բաղկացեալ են, ասոնք ալ կ'ըսուին բաղադրեալ մարմիններ :

Հիներն ինչպէս որ գիտեք պարզ մարմինները չորս կը սեպէին, որ են օդ, ջուր, հուր, հող . և ասոնց պարը կ'ըսէին, իբրև թէ աշխարհիս ամէն նիւթերն ասոնցմէ շինուած ըլլային . բայց մենք ասկէց առջի զասերուն մէջ ցցուցինք, որ ասոնցմէ մէկն ալ պարզ մարմին չէ, հապա ամէնքն ալ բաղադրեալ :

Խակ արդի բնալուծութիւնը մեզի կը սորվեցընէ, որ ինչուան հիմա ձանց ցուած տարերաց կամ պարզ մարմնոց թիւը 62 հատ է . բայց շատ հաւանական է որ բնալուծութիւնը աւելի կա-

տարելագործուելով՝ կարենայ լուծել նաև ան մարմինները՝ որ ինչուան հիմա անլուծանելի մնալով տարերաց կարգը անցած են. և ասանկով կրնայ պակսիլ տարերաց թիւը, որովհետեւ տարրը լուծուած են՝ լուծուիլ զիարենալնուն համար. բայց կրնայ ալ աւելալ, որովհետեւ նոյն պարզ մարմին կարծուածն ալ լուծուելով՝ կրնան մէջէն ելլել երկու իրեք պարզ մարմիններ : Ի՞այց հիմկու հիմա պարզ մարմին կարծուածները՝ ինչպէս որ ըսինք, 62 հատ են, ու բնալուծութեան մէջ դարձ կ'ըսուին՝ որովհետեւ ուրիշ ամէն մարմիններ ասոնցմէ կը ձեւանան :

Ի՞ տարերքս սովորաբար երկու դաս կը բաժնուին, մէյմը անոնք որ մէտաղադիլք կամ մէտաղանմանք՝ կ'ըսուին, և 15 հատ են, մէյմըն ալ անոնք որ մէտաղադիլք կ'ըսուին, որ 47 են : Ի՞այց աս դասաւորութեան ճշգութիւնը երթալով կը կողսուի : որովհետեւ ան յատկութիւններն որ մետաղաց կը տրուէր, նոյն յատկութիւնները կը գտնուին այնպիսի մարմնոց վրայ ալ, որ ուրիշ կողմանէ ամեննեին մետաղաց չեն նմանիր. զոր օրինակ կրացեալ ածուխը իրեն ջերմութեան սաստիկ հաղորդիչ ըլլալուն համար, կրնար մետաղաց կարգն անցնիլ, թէպէտ և անոնց ծանրութիւնն ու փայլունութիւնը ընդհակառակն փոթասինը որ 1807ին գտուած մետաղմըն է՝ արծաթի պէս ալ փայլուն է, բայց մետաղաց յատուկ ծանրութիւնն ու պնդութիւնը չունի, այլ ամենակակուղ ու ջրէն թեթև նիւթ մի է :

Իսել է թէ դեռ աղջկ դասաւորութեան մը կարօտ ենք . որովհետեւ հիմկու հիմա ամէն բնալոյն իր կարծեացը կը հետեւի . թէպէտ և եղած զանազանութիւններն ալ շատ նրբին ու վերացեալ յատկութիւններ են, անոր համար մեր համառօտ ու պարզ բնալուծական սկզբանց ալ չեն յարմարիր զանոնք քննելը . ուստի մենք ալ ինչուան հիմա բնական կարգի միայն հետեւ-

ցանք, քննելով զանոնք որ անմիջապէս մեր մօտն են և ամենուն ալ ծանօթ, և որոնք որ չէ թէ ուսումնական հապառամկան անուններ են . ինչպէս օդը, ջուրը, հուրը և հողը : Ի՞սոնց վրայ խօսելու ատեն յիշեցինք նաև ան պարզ մարմիններն կամ տարերքն, որոնցմով որ բաղադրուած են այդ նիւթերն և անոնց ուսումնական աննունները :

Հիմա որ բնալուծութեան առջի սկզբունքներն պարզ կերպով սորվեցանք, կրնանք քիչ մը լեզունիս փոխելու աւելի ուսումնական ո՛չ մը բանեցընել . որովհետեւ առջեկի եղածնիւթերնիս ալ նոյն բանը կը պահանջէ . վասն զի ասկէց ետեւ պիտի սկսինք խօսելու բնալուծական անուանակոչութեան, մարմնոց բաղադրութեան օրինացը, պարզ մարմնոց, թթուներու, թթուիկներու և աղերու վրայ :

Յուսանք որ աս տարուանս մէջ դըրուած բնալուծութեան համառօտ ու զուարժալի սկզբունքները՝ ձեր ուշադրութիւնը և հետաքրքրութիւնը շարժեցին . որով և առաջիկայ տարուանս մէջ ալ դրուելու դասերն աւելի անյագութեամբ պիտի լսէք, որովհետեւ որ անոնց մէջ աւելի տեղն 'ի տեղ պիտի բացատրենք բնալուծութեան հիմնական գիտելիքները . որով կը տեսնէք թէ մարզս աս գիտութեամբ ինչպէս բնութեան ամէն գաղտնի օրինացը միտք հասուցեր է, մանաւանդ թէ կերպով մը ինքը անոնց օրէնսդիր եղեր է, և չափու սահման դրեր է բնութեան մէջը եղած ամենայն մարմնոց և անոնց բաղադրութեանը . և դարձեալ անոնց յատկութիւններն ու զօրութիւնները իրեն պիտոյիցը ծառայեցուցեր է՝ բնալուծական գիտութեան զօրութեամբը :

Հ. Օ. ԳՈՒՐԳ.